ԲԱՎՐԱ

Վարչական ղեկավար՝ Պավլիկ Սումբուլյան

Հեռ: 093 80 39 46

Մակերես՝ 21.06 կմ^2

Բնակչություն՝ 656

Ինդեքս՝ 2802

bavra.shirak@mta.gov.am

Բավրա գյուղը (նախկինում կոչվել է Տիտոյի խարաբա կամ Թիթոյի խարաբա) գտնվում է հանրապետության ծայր հյուսիսում, Վրաստանի Հանրապետության սահմանից 2,5 կմ հեռավորության վրա: Բավրայի բնակիչների նախնիները եկել են 1860 թվականին Արդահանից. նախ տեղափոխվել են Ախալքալաքի Բավրա գյուղ, իսկ հետո՝ Հայաստան: 1958 թվականի դեկտեմբերի 8-ի երկրաշարժի հետևանքով գյուղն ավերվել է և նորից կառուցվել Գյումրի-Վրաստան ավտոճանապարհի հարևանությամբ: Պահպանվել են հին Բավրայի ավերակները: Գյուղից հարավ-արևմուտք կան մեկ այլ բնակավայրի և բերդի ավերակներ: Գյուղում գործում է դպրոց, բուժկետ, կապի բաժանմունք, եկեղեցի,

մերձակայքում տեղակայված են սահմանապահ ուղեկալ, մաքսատուն և բանկի մասնաճյուղ: